



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը, չորրորդ տարին ըլլալով, կազմակերպած է Բուն Բարեկենդանի աւանդական ճաշկերոյթ, որ կը վայելէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը:

Ձեռնարկը տեղի պիտի ունենայ Կիրակի, 18 Փետրուարի երեկոյեան ժամը 5ին, Ս. Նահատակաց եկեղեցւոյ «Աւետիսեան» սրահին մէջ:

Ինչպէս անցեալ տարի, այս տարի եւս, ձեռնարկին հիւրընկալումը յանձն առած է Առաջնորդարանիս բարերարուհիներէն Տիկին Աշխէն Փիլաւճեան:

Բարեկենդանի Տօնին ու անոր կապուած աւանդութեանց մասին պիտի բանախօսէ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Պիտի իրագործուի գեղարուեստական կոկիկ յայտագիր մը:

Ելոյթ պիտի ունենայ Թեմիս նորակազմ մանկապատանեկան երգչախումբը, ղեկավարութեամբ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի: Երեկոն պիտի խանդավառէ երգիչ ճորճ Պաղտոյեան:

Տոմսերու սակն է 35 տոլար, իսկ 12 տարեկանէն վար մանուկներու համար՝ 25 տոլար: Մանրամասնութեանց համար կարելի է հեռաձայնել Ազգային Առաջնորդարան:

WESTERN PRELACY ANNUAL PAREGENTAN BANQUET

On Sunday, February 18, Western Prelacy's 4th annual *Paregentan* Banquet will take place at the "Avedissian Hall" of Holy Martyrs Church in Encino at 5:00 p.m.

The banquet, held under the auspices of H.E. Arch. Moushegh Mardirossian, Prelate, is organized by the Prelacy Ladies Auxiliary and hosted by long time Prelacy benefactor Mrs. Ashkhen Pilavjian.

Very Rev. Fr. Muron Aznikian will speak on the traditions associated with Paregentan and the newly formed Prelacy youth choir, under the guidance of Very Rev. Fr. Barthev Gulumian, will perform at the event. Entertainment will be provided by George Baghdoian.

Admission is \$35 for adults and \$25 for children ages 12 and under. For more information please contact the Prelacy offices.

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Հինգշաբթի առաւօտեան, Փետրուար 15-ին, Ս. Վարդանանց Չորավարաց տօնին առթիւ, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ ժամերգութիւն եւ Ս. Պատարագ պիտի կատարուի:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՍ

Յայտնենք նաեւ, որ Կիրակի, 11 Փետրուար 2007, կեսօրուան ժամը 12:30-էն սկսեալ, Վարդանանց տօնախմբութիւն մը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմէնակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ կազմակերպութեամբ Կիրակնօրեայ վարժարաններու վարիչ մարմինին:

Թեմիս բոլոր Կիրակնօրեայ վարժարաններու աշակերտները իրենց մասնակցութիւնը պիտի բերեն երգերով, արտասանութեամբ եւ տրամախօսութեամբ: Մուտքը ազատ է:

Կը հրաւիրենք բոլոր պատանիներն ու երիտասարդները, որպէսզի ներկայ ըլլան Վարդանանցի տօնախմբութեան, վայելեն հանդեսը եւ լսեն Առաջնորդ Սրբազան Հօր պատգամը:

CELEBRATING THE FEAST OF STS. VARTANANTZS

On Thursday, February 15, morning services will take place in all Prelacy churches to commemorate Sts. Vartanantz.

On Sunday, February 11, 2007, our Prelacy Sunday Schools will celebrate the Feast of Sts. Vartanantz at the "Armenak Der Bedrossian" Hall of St. Mary's Church in Glendale. The event, held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, is organized by the Sunday Schools' Directorate with the participation of Sunday Schools' students.